«Դատավարական գործողությունների ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցների օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

---------- 2018 թվականի N -----Ն

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Սահմանել դատավարական գործողությունների ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցների օգտագործման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ Ն. Փաշինյան

Հավելված N 1

ՀՀ կառավարության 2018
թվականի

_____-ի N _____Ն որոշման

ԿԱՐԳ

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են դատավարական գործողությունների ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցների օգտագործման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգի իմաստով տեխնիկական միջոցներ են գիտականորեն հիմնավորված ցանկացած գործիքներ, սարքավորումներ, համակարգեր, տարբեր տեսակի հարմարանքներ, որոնց միջոցով հնարավոր է հայտնաբերել, վերցնել, հետազոտել գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ, ամրագրել դատավարական գործողությունների ընթացքը և արդյունքները:
3. Սույն կարգի դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ գլխում նախատեսված պաշտպանության միջոցների կիրառման ընթացքում տեխնիկական միջոցների կիրառման նկատմամբ:

2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

4. Դատավարական գործողություններ կատարելիս տեխնիկական միջոցներ օգտագործում են դատավորը, քննիչը, այդ թվում՝ քննչական խմբի անդամը, հետաքննության մարմնի աշխատակիցը, դատավորի ամ քննիչի օգնականը, դատական նիստերի քարտուղարը: Եթե տեխնիկական միջոցի օգտագործման համար պահանջվում է մասնագիտական հմտություններ և գիտելիքներ, ապա վարույթն իրականացնող մարմինը նշանակում է մասնագետ: Տեխնիկական միջոցների օգտագործման տեխնիկական աջակցությունն ապահովում է դատարանի, հետաքննության կամ նախաքննության մարմինների մասնագիտացված ստորաբաժանումները:
5. Քննիչն իրավունք ունի տեխնիկական միջոցների օգտագործումն ապահովելու նպատակով ներգրավել օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձանց:
6. Դեպքի վայրում տեխնիկական միջոցներ օգտագործող անձինք պահպանում են «Դեպքի վայրի պահպանման կանոնների մասին» ՀՀ կառավարության որոշման պահանջները:
7. Տեխնիկական միջոցներ կիրառած անձինք իրավասու չեն հրապարակելու օրենքով պաշտպանվող գաղտնիքները: Դատավորի կամ քննիչի օգնականը, դատական նիստերի քարտուղարը, մասնագետը տեխնիկական միջոցների կիրառման արդյունքում ստացված տեսաձայնագրությունը, տեսագրությունը, տեսաերիզները, համակարգչային տեղեկատվության կրիչները փոխանցում են վարույթն իրականացնող մարմնին:
8. Տեխնիկականմիջոցներկիրառելու դեպքում քննչական գործողության թղթային արձանագրության մեջ նշվում է գործողության ընթացքի մասին համառոտ տեղեկությունները:[1]

3.ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

10. Տեխնիկական միջոցներն օգտագործելիս պահպանվում են օրինականության, հավաստիության, համաչափության և անվտանգության սկզբունքները:
11. 11. Դատավարական գործողություններ կատարելիս կարող են օգտագործվել օրենքով չարգելված տեխնիկական միջոցներ: Տեխնիկական միջոցների օգտագործումը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ, իսկ դրանց կիրառման արդյունքում ստացված նյութերը կարող են օգտագործվել դատավարական, հանցագործությունների բացահայտման կամ կանխման նպատակներով (Օրինականության սկզբունք):
12. Տեխնիկական միջոցների օգտագործման արդյունքում ստացված տվյալները պետք է լինեն ամբողջական և ճշգրիտ: Տեսաձայնագրառման կամ տեսագրման (այսուհետ՝ տեսաձայնագրառում) ընդհատումը, որի վերաբերյալ կազմվել է արձանագրություն, ինքնին չի ազդում տեսաձայնագրառման արդյունքների հավաստիության վրա և չի կարող որակվել որպես տեսաձայնագրառման նյութերի մոնտաժում կամ փոփոխություն

(Հավաստիության սկզբունք):

13. 13. Տեխնիկական միջոց ընտրելիս նախապատվություն տրվում է այն միջոցին, որի կիրառմամբ հնարավոր է, նվազագույնը միջամտելով մարդու հիմնական իրավունքներին, համարժեք կերպով լուծել իրավաչափ խնդիրը: Տեսաձայնագրառումն օգտագործվում է այնպես, որ դրա տեսադաշտը ճշգրտորեն ընդգրկի միայն այն պատկերները, որոնք համապատասխանում են դրա կիրառման նպատակին (Համաչափության սկզբունք):
14. Տեխնիկական միջոցները և դրանց օգտագործումը պետք է համապատասխանեն անվտանգության, գիտականության և բարոյական հանրաճանաչ նորմերի պահանջներին: Դատավարական գործողությունների ընթացքում տեխնիկական միջոցների օգտագործումը չպետք է վտանգի մարդու կյանքը և առողջությունը: Տեխնիկական միջոցներ կիրառողը պետք է գնահատի տեխնիկական միջոցների հնարավոր բացասական ազդեցությունը (Անվտանգության սկզբունք):

4. 4. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ և ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

15. 15. Տեխնիկական միջոցների տեսակը, քանակը և կետայնությունը (resolution) պետք է համապատասխանի տեխնիկական միջոցի կիրառման նպատակին, վայրի, տարածքի ընդհանուր մակերեսին, սենյակի կառուցվածքին և այլ պայմաններին:
16. Տեսաձայնագրառումը և լուսանկարահանումն իրականացվում է գունավոր եղանակով՝ համապատասխանաբար տեսաձայնագրառման և լուսանկարահանման հնարավորություն ունեցող թվային սարքով:
17. Թվային տեխնիկական սարքում ամրագրված ամսաթիվը և ժամը պետք է համապատասխանի դատավարական գործողության իրականացման իրական ամսաթվին և ժամին:
18. Տեսաձայնագրության ֆայլից պետք է հնարավոր լինի պարզել տեղեկատվություն տեսաձայնագրառման կատարման ժամի և օրվա մասին:

1. **ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

19. Դատավարական գործողությունների կատարելիս տեխնիկական միջոցներ կիրառելու դեպքում նախապես պետք է ստուգել տվյալ տեխնիկական միջոցի սարքինությունը, այդ թվում՝ մարտկոցի, հիշողության կրիչի և դրանում բավարար ծավալի առկայությունը:
20. Անհրաժեշտության դեպքում դատավարական գործողությունն իրականացվում է երկու կամ ավելի տեխնիկական միջոցներով, ինչի մասին նշվում է դատավարական գործողության արձանագրության մեջ:

21. Տեխնիկական միջոցների կիրառման ընդհատման տևողությունը նշվում է համապատասխան արձանագրության մեջ:
22. 2 Եթե դատավարական գործողությունն իրականացվելու է մեծ տարածություն ընդգրկող հատվածում կամ գործողության ընթացքում կատարվելու են տեղաշարժեր, ապա վարույթն իրականացնող անձը տեսաձայնագրառող անձին նախօրոք տեղեկացնում է գործողության ընթացքում կատարվող տեղաշարժերի հաջորդականության մասին:
23. Ամրագրման արդյունքում ստացված լուսանկարչական նեգատիվները և լուսանկարները, դիապոզիտիվները, կինոժապավենները, ժապավենները, կինո և տեսաֆիլմերը, տեսաերիզները, տեսապատկերները, համակարգչային տեղեկատվության կրիչները, տեսաձայնագրությունը, ձայնագրառման և (կամ) այլ նյութերը պահպանվում են առանձին լազերային սկավառակների կամ թվային այլ կրիչների վրա, որոնք կցվում են արձանագրությանը:

[1] Այս կետն առաջարկում ենք քննարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան փոփոխությունների համատեքստում: